

Ըսինք թէ կը յիշուի Խօջայ Սուլթանումին մէկ որդին՝ Սաֆար, որու մասին քիչ բան գիտենք: Ջուղայի զերեզմաններէն մէկը ունի սա համառօտ տապանագիրը:

«Տապան Սաֆր(ա)զին Խարում Բարէ
Թվ(ին) ՌՃԼԳ (1684)»:

Այս «Խաղում Բարէ»ն կրնայ ըլլալ Սուլթանումի որդւոյն՝ Սաֆարի կինը եւ կամ թերեւս զուտորը:

ՋԱԼԱԼ ԲԷԿ

Ջալալ Բէկ կրտսերագոյն որդին էր Խօջայ Սաֆարին: Կը յիշուի 1604ի Յայսմաուրքի Յիշատակարանին մէջ: Ինքն է վերջին ըստացողը Նոր Ջուղայի թիւ 477 մագաղաթեայ Աւետարանին, որ գըրուած է Գրիստոսի 1300 թուականին: Հոն ինք կը կոչուի «Պարոնաց Պարոն Ջալալ Բէկ»:

Առաքել Դաւրիթեցի խօսելով Փիլիպպոս Կաթողիկոսի Սպահան երթին մասին, հոն տարուած Լուսաւորչի Աջը դարձեալ էջմիածին բերելու համար, կու տայ ՌՁՁ (1637) թուականը, եւ կ'ըսէ. «Փիլիպպոս Կաթողիկոսն զնոմոս հրամանաց թագաւորին երեք առ թոռունսն Խօջայ Սաֆարին, զի որդիքն վախճանեալք էին. եւ անուանք թոռանց էր՝ Ջալալ եւ Միքայէլ եւ Սինան եւ Պատիկ աղա. եւ սոքա ոչ կամեցան տալ զԱջն. որոց սաստեաց Կաթողիկոսն բարկութեամբ մեծաւ. եւ նոքա երկուցեալք ի սրբութենէ նորա եւ ի հայրապետական անիծիցն՝ թուլացան ի պնդութենէ: Եւ հայրապետն տէր Փիլիպպոս բազում քահանայիւք ինքնին զնաց ի տուն Խօջայ Սաֆարին, էառ անտի զԱջն եւ երեք ի Խօջանց եկեղեցին»²¹: Աջին վերջնական կերպով Սպահանէն էջմիածին ժամանելը տեղի կ'ունենայ, ըստ Դաւրիթեցիի, 1638ի Սեպտեմբեր 20ին:

Դաւրիթեցի կը հաւաստէ՝ թէ Խօջայ Սաֆարին «որդիքն վախճանեալք էին», եւ կը յիշէ թոռները՝ Ջալալ, Միքայէլ, Սինան ու Պատիկ Աղա (այն է՝ Աղա Խաչիկ): Այս երեք վերջինները, այո՛, թոռներն էին Խօջայ Սաֆարի, այսինքն՝ որդիները Մէլիք Աղային. սակայն Ջալալ՝ Խօջայ Սաֆարի թոռ չէր, այլ անոր որդին էր, Ջալալ Բէկը, որ անշուշտ Մէլիք Աղայի, Ֆոանդուլի եւ Սուլթանումի մահէն ետք՝ եղած էր Սաֆարի զերգաստանին գլուխը: Ուստի, Դաւրիթեցի կը սխալի՝ երբ կը հաւաստէ թէ Խօջայ Սաֆարի որդիները մեռած էին: Ջալալ Բէկ մեռած է Աջին էջմիածին փոխադրութենէն հինգ տարի ետք, այն է՝ 1643ին: Իր տապանաքարն ալ գտայ Նոր